ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԿԱՊՈՒՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ _____ Է.ԱՎԱԳՅԱՆ

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

Մարզ՝ Կոտայք

Հաստատություն՝ <<Կապուտանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Դասարան՝ 12

Դասղեկ՝ Լուսինե Ստեփանյան

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ամենօրյա աշխատանք

1.Էլեկտրոնային մատյանում նշել բացակայությունները:

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում:

Ամենշաբաթյա աշխատանք

1.Անցկացնել դասղեկական ժամեր

2.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը

3.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 11աշակերտից: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակութ յուններ: Կա 1 գերազանց սովորող աշակերտ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի որոշ աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար:Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկա դժվար դաստիարակվող աշ ակերտ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում : Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտներ ի մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
08.09.2023թ.	1. 2023-2024ուստարվա անելիքներ, քննարկումներ ուսումնամնադաստիարակչական հարցերի շուրջ: 2. Ծնողկոմիտեի ընտրություն:: 3. Կազմակերպչական հարցեր:	Ուսուցման կազմակերպման նոր կանոնները, դպրոց հաճախելու ժամանակացույցը և կանոնները:
16.10.2023թ.	1. Կազմակերպչական հարցեր. անհարկի բացակայություններ, առաջադիմության և կարգապահության բարելավում. 2. Լրացուցիչ խորհրդատվական անվճար պարապմունքներ հետ մնացող աշակերտների համար. 3. Ներառական կրթության կազմակերպումը դպրոցում. 4. Ընթացիկ հարցեր.	Տանել հետևողական աշխատանք բացակայությունների դեմ, կազմակերպել շերտավորված աշխատանք աշակերտների վարքի, առաջադիմության բարելավման համար:
04.03.2024թ.	1. Խորհրդատվություն ծնողներին. II կիսամյակի ուսումնական ծրագրի մեկնաբանում, առաջադիմության բարձացման ուղիների քննարկում: (հաղորդող՝Լ. Ստեփանյան) 2. Նախապատրաստական աշխատանքներ՝առաջիկա գիտելիքների ստուգմանը պատշաճ մակարդակով մասնակցելու համար: (հաղորդող՝Լ. Ստեփանյան)	ՈՒշադրություն դարձնել առաջադիմությանը և պայքար տանել անհարգելի բացակայությունների դեմ: Առաջիկա գիտելիքների ստուգմանը մասնակցել պատշաճ մակարդակով: